

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՒ ԱՐԴԻՒՆԱ- ԲԵՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԳԵՍԸ

I. Ցուցահանդէսի նպատակը, կազմակերպութիւնը և բաժինները.—Այլե-
ալ բաժինների ընդհանուր տեսութիւնը. գիտական և պատմական տեսա-
կէտների բացակայութիւնը, նրա անհամապատասխան լինելը չունեւոր
դասակարգի համար:

Երեք տարի սրանից առաջ Կովկասեան Գիւղատնտեսական
Ընկերութիւնը մտածում էր՝ ինչ ձևով ներկայացնել մեր փոք-
րիկ երկրի արդիւնաբերութիւնը Պարիզի համաշխարհային ցու-
ցահանդէսում: Ընկերութեան անդամներից մի քանիսը առա-
ջարկում էին Գիւղատնտեսական Ընկերութեան յիմնամեակի
առթիւ, որ գալիս էր 1899-ին, կազմակերպել ցուցահանդէս,
որ և (անհրաժեշտ կրճատումներով) կարելի կը լինէր փոխա-
դրել Պարիզ: Ի նկատի ունենալով, սակայն, ժամանակի ու մի-
ջոյների սղութիւնը, աւելի բարւոք համարուեց յետաձգել ըն-
կերութեան յօրհանման ցուցահանդէսի բացումը մինչև 1901-ը
երբ լրանում էր և Կովկասի միացման սկզբի հարիւրամեակը
Ռուսաստանի հետ: Շատ արդարացի կերպով ենթադրւում էր
որ միացման հարիւրամեակի տօնելու ամենանպատակալարմար
միջոցը ցուցահանդէսն է: Վերջինս ակներև կերպով կը պարզէր
այն փոփոխութիւնը, որ կրած է Կովկասը XIX տարուայ ըն-
թացքում, ներկայացնելով միևնոյն ժամանակ այն դրութիւնը,
որի մէջ գտնւում է մեր երկիրը նոր դարի շէմքում: Բացի երկրի
արդիւնաբերական պիտոյքների հանդէսից որոշուեց կազմակեր-
պել և ժողովներ երկրագործութեան զանազան ճիւղերով պարա-
պողներից և հրատարակել մի հաւաքածու գիւղատնտեսական
ընկերութեան յիմնամեակի առիթով:

1900 թուի ամառուայ վերջը, եթէ չենք սխալւում, առ-
նուեց մասնաւոր կերպով երկրագործութեան միջոցառումի հաւա-
նութիւնը, աշնան ու ձմռան ամիսներին կազմուեց ծրագիրը,

առնուեց զանազան քաղաքների համաձայնութիւնը՝ մասնակցել ու նպաստել նիւթապէս կազմուելիք ցուցահանդէսին:

Երբ գարնան սկզբին հաստատուեց ծրագիրը և պարզուեց որ կարելի կը լինի գտնել ցուցահանդէսի կազմակերպութեան համար անհրաժեշտ 80 - 90 հազ. ուրբլին, ձեռնարկուեց հանդէսի կազմակերպութիւնը:

Գործի աջողութիւնը ապահովելու համար ժողովների կազմակերպութիւնը թողնուեց Գիւղատ. Ընկ. խորհրդին, ժողովածուի կազմելը յանձնուեց ընկերութեան քարտուղարին, իսկ ցուցահանդէսի համար բացի ընդհանուր կարգադրիչից նշանակուեցին նաև յատուկ կարգադրիչներ ամեն մի գլխաւոր բաժնի համար:

Համապատասխան ցուցահանդէսի «Գիւղատնտեսական և Արդիւնաբերական» անուան, ցուցահանդէսը պիտի ունենար հետեւեալ գլխաւոր բաժինները՝ հողագործութիւն, գինեգործութիւն, այգեգործութիւն, անտառապահութիւն, ընտանի կենդանիներ, կաթնատնտեսութիւն, շերամապահութիւն և մեղուաբաժնութիւն, որս և ձկնորսութիւն, գիւղատ. գործիքներ և մեքենաներ, անայնագործութիւն և արհեստներ, գործարանական արդիւնաբերութիւն, բաժիններ հանքային, արհեստագիտական, մանկավարժական, գիտական-վիճակագրական, զեղարուեստական:

Սեպտեմբերի 2-ին ցուցահանդէսը բացուեց պաշտօնապէս: Նորանոր իրեր շարունակոււմ են ստացուել ամեն օր, թէև էքսպօնատների աւելանալը դժուար թէ չօշափելի կերպով կարողանայ փոխել այն տպաւորութիւնը, որ ստանում է յաճախորդը հէնց հիմա:

Ցուցահանդէսը կազմակերպուած է այգեգործական դպրոցի հողի վրայ և բռնում է մի քանի դեռատին տարածութիւն: Բացի ընդարձակ գլխաւոր շինութիւնից, մասնաւոր էքսպօնատները շինել են իրանց համար և մօտ 20 աւելի մանր պաւիլիօններ, որոնցից մի քանիսը բաւականին գեղեցիկ են:

Մեր ընդհանուր տեսութիւնից դուրս է մանրամասնօրէն յիշել այստեղ՝ ինչ է ներկայացրած հանդէսի այս կամ այն բաժնում, մասնաւոր որ այդ տեսակ նկարագրութիւն դժուար էլ է կատարել դեռ ևս չը տպագրուած ուղեցոյցների բացակայութեան պատճառով: Բաւական է ասել որ ցուցահանդէսը պարունակում է իր մէջ համարեաւ այն բոլորը, ինչ որ գրուած է Կովկասի բազմակողմանի ու հեռաւոր անկիւններում:

Հողագործական բաժնում նահանգ-նահանգ գետեղուած են

այն բոլոր հացահատիկներն ու բոյսերը, որոնցով ապրում է մեր երկրի ազգաբնակչութեան 800/0-ը:

Ուշադրութեան արժանի է գիւղատնտեսութեան վերատեսուէչ հանգուցեալ Գէնգիսկու ժողովածուն Կովկասում մշակուող բոլոր հացահատիկների տեսակների (հատիկների և հասկերի): Գիւղատնտեսական գործիքների բաժնում, օտար ֆիրմաներին կից, ներկայացրած են և պ. պ. Տէր-Ջաքարեանյի և Մամաջանեանի կասկու մեքենաները: Եթէ հնարագէտ պարոնների աշխատանքը—ստեղծել մի մեքենայ, որ բացի ցորենը բաժանելուց ծղնոտից և մանրացնէր վերջինս դարձնելով դիւրամարս յարդ, յաջողութիւն—դա կը ներկայանայ գիւղացի ազգաբնակչութեան համար անագին բարիք: Բաւականին հարուստ գինեգործական բաժնում առաջնակարգ տեղ է բռնում Ուզէլի (կայսերական ընտանիքի) վարչութիւնը: Ուզէլի Կովկասեան վարչութիւնը ներկայացրել է ոչ միայն խաղողի տեսակներ (տեղական և արտասահմանի) գինիների հետ: միասին, այլ և խաղողի տեսակների կենդանի որդեր առանձին կտոր հողի վրայ: Նոյն վարչութեան բաժնում կարելի է տեսնել և թէյի թփեր (Բաթումի մօտից) և անուշահոտ իւզ, Կախէթում բուսցրած վարդից ստացուած, և ըամի անուանեալ նոր բոյսը իր հիւանալի թելերով: Կարկտի դէմ կռուելու համար գործածուող մօրտիթ թընդանօթները մոցրած են արդէն Ուզէլի Կախէթի այգում և այս տարուայ յաջող փորձերը իրաւունք են տուել բերել այդ թնդանօթները ցուցահանդէս:

Այգեգործական բաժնի մասն են համարուելու և մի քանի առանձին չինուած պաւլիթօններ, որոնց մէջ Սարաջեվի ու Սոդոմոնովների կօնակի գործարանները ու Ֆօքէրի և Փրիգօնովի տնտեսութիւնները թողնում են բաւականին լաւ տպւորութիւն:

Այդ բաժինները յաճախողը անցնում է անտառայինը զանազան տեսակ ծառերի նմուշներով, շերամապահականը՝ իր չքեղ գործուածքներով, մեղուարուծականը, մրգեղեններինը:

Կաթնատնտեսական բաժնում ուշադրութիւն է գրաւում տարէց տարի աւելի և աւելի զարգանող պանրագործութիւնը չվէյցարական ձևով:

Շագինովի և Մելիք-Բախտամեանի պաւլիթօններում ցանկացողը կարող է տեսնել, որ արժէքաւոր արտասահմանեան պանիրների պատրաստելը այնքան էլ դժուար չէ...

Բաւականին մեծ տեղ են բռնում տնայնագործական և արդիւնաբերական բաժինները: Դրանք շատ բազմակողմանի են

և ներկայացնում են այն ամենը, ինչ որ այդ ճիւղերից արժանի է ուշադրութեան և է տեսակէտից:

Համբերի, կոյրերի, անչափահաս ոճրագործների դպրոցների շինուածքներն ու գործուածքները բռնում են այդ բաժիններում աչքի ընկնող տեղը Մարդ որոշ չափ հանգստանում է, տեսնելով թէ ինչպէս մեր մրցման ու անհատական շահի դարում առաջ է գնում և բնութիւնից հալածուածների օգնութեան գործը:

Հանքային բաժնում աչքի ընկնող տեղ է բռնում Կովկասի հանքային վարչութիւնը: Վերջինիս կազմած աղիւսակը ամեն մէկին շօշափելի կերպով ցոյց է տալիս, թէ որքան արագ կերպով զարգանում է մեզ մօտ նաւթի, մանգանէզի (սև քարի) և պղնձի արդիւնաբերութիւնները: Բազուայ նաւթարդիւնաբերողների առանձին շինութիւնը արդարացի կերպով համարուելու է ամենաաջողակ և ամենախելացի կերպով կազմածը ամբողջ ցուցահանդէսում:

Արդիւնաբերական բաժնի վերջի մասը նուիրուած է կիսով չափ գեղարուեստական բնաւորութիւն կրող ճիւղերին՝ չքեղ կահ-կարասիքին, պարկէտներին և այլն:

Իտալացի Անդրօլետտիի տեղական մարմարիոններից և քարերից պատրաստած էքսպօնատները ցոյց են տալիս, թէ ինչ գեղեցիկ և չքեղ քանդակագործութիւններ կարելի է ստանալ մեր լեռներում թափուած հարստութիւններից:

Այս բաժինն կից է գեղարուեստական բաժինը, ուր ամենից շատ ուշադրութիւն են դրաւում պ. պ. Սուրէնեանցը և Դաբայեվը: Վերջինիս «Դրօշակակիրը» և առաջինի «Աւերումից յետոյ» պատկերները տպաւորութիւն են թողնում և ոչ զգայուն մարդկանց վրայ:

Մեծ շինութիւնից դուրս են թիֆլիսի և Բազու քաղաքների մանկավարժական և գիտական բաժինները: Դրանցից ամեն մէկում յաճախողը կը գտնէ հետաքրքիր տեղեկութիւններ՝ վերաբերեալ այդ քաղաքների սնտեսութեան, երկրի կրթական ու այլ կարիքների մասին:

Մի քանի օրուայ ընթացքում ցուցահանդէս յաճախողը կը տեսնէ համարեա այն ամենը, ինչ արժանի է ուշադրութեան: Բայց այդ չի նշանակում որ տեսնելով յաճախողը և հեշտ դադափար կը կազմէ երկրի արդիւնաբերութեան մասին:

1886 թուին (թէ 1887-ին լաւ չենք յիշում) Խարկով քաղաքում կազմակերպուած էր համառուսական գիւղատնտեսական ցուցահանդէս: Բացի հարաւային Ռուսաստանի միլիօնա-

աւերելից և խոշոր կալուածատէրերից ցուցահանդէսին մասնակցում էին և մի քանի սեփական կալուածքներ ունեցող «գիւղացիներ», որոնց տշխարի հօտերը հաշւում էին տասնեակ հազարներով և ձիերի երամակները հազարներով: Ձիերի էքսպերտիզայի ժամանակ ներկայ էր ի միջի այլոց և մի բարձրաստիճան տիկին, իր երիտասարդ բայց դեռ կեանքին անժանօթ աղջկայ հետ: Երբ հերթը հասաւ «գիւղացու» հազարներ արժէք ունեցող ձիուն, միամիտ օրիորդը բարձր ձայնով դիմեց տիկնոջ. «Մայրիկ, տես, ինչպէս գեղեցիկ է «գիւղացու» ձին. հապա ինչու ես ասում թէ ուես գիւղացիք աղքատ են, միթէ աղքատը կարող է աղպիսի ձի ունենալ»:

Ինչ պատասխանեց տիկինը միամիտ աղջկան, մենք չը լսեցինք, բայց օրիորդի այդ մի քանի խօսքը պարզեց երիտասարդ ուսանողներին, թէ ինչ սխալմունքներ կարող են առաջացնել անհամապատասխան կերպով կազմակերպուած ցուցահանդէսները: Մինչև օրս կազմակերպուած բոլոր ցուցահանդէսները իրանց գոյութեան հէնց առաջին օրուանից ունեցել են երկու նպատակ՝ կրթական-գիտական և բեկլամային, որոնց համեմատ կրել են և այս կամ այն գոյնը: Կրթական-գիտական նպատակը խաղացել է դրանց մէջ անկասկած առաջնակարգ տեղ: Յոյց տալ ժողովրդին այս կամ այն անյայտ կամ նոր արդիւնաբերութեան ձևը, ծանօթացնել գիւղացուն այս կամ այն օգտակար և ձեռնտու աշխատանքի միջոցի հետ, ժողովրդի ուշադրութիւնը դարձնել այս կամ այն հասարակական բնաւորութիւն ունեցող լուրջ հարցի վրայ,—եղել է նպատակ ինչպէս վերջերս Ռուսաստանում կազմակերպուող շարժական ցուցահանդէս դասախօսութիւնների (մեղուաբուծական, կաթնաստեղծական և այլն), նոյնպէս և Պարիզի անցեալ տարուայ ցուցահանդէսի սօցիալական, գեղարուեստական բաժինների: Գիտական բնաւորութիւն կրել են ցուցահանդէսները, ինչպէս XVII դարում Կօլբէրի ժամանակ, նոյնպէս և մեր օրերում բացուած համալսարանական Գլասգօի և համալսարանական Բուֆալօյի ցուցահանդէսներում: Կրթական գիտական նպատակի հետ միասին առաջ է գնացել ցուցահանդէսում բեկլամն ու մրցումն միեւնոյն ձեւում աշխատողների մէջ: Փայլել ցուցահանդէսում, խօսել տալ իր մասին, ստանալ մրցանակ, ապագրուել յայտարարութիւններում ի գիտութիւն «մուշտարիների»—ահա այն նպատակը, որ մեծամասնութեանը մղում է դէպի ցուցահանդէսները: Բեկլամն է որ ստիպում է հազարներ ծախսել և մասնակցել ցուցահանդէսներում ոչ միայն այս կամ այն կալուածատէրին,

գործարանատէրին, այլ և ամբողջ ազգերին ու պետութիւններին:

Եւ դա հասկանալի է:

Որ և է առեւտրական կամ արդիւնաբերական ֆիրմա մասնակցելով ու մրցանակներ ստանալով ցուցահանդէսներում, անուն է հանում, խօսել է տալիս իր մասին հազարներին, արտաւորում է տասնեակ հազարների մտքի մէջ և բնականաբար (թէև կարծես անգիտակցաբար), քաշում է դէպի իրան այն ֆիրմաների մուշտարիներին, որոնք անխոհմտութիւն են ունեցել չը փայլել ցուցահանդէսում:

Պարիզի վերջի միջազգային ցուցահանդէսի քիմիական և ներկերի բաժնում փայլում էր Գերմանիան: Այդ տեսան այն 50 միլիօն ալցելոդները, որ գնացել էին ցուցահանդէս, դրա մասին գրեցին տիեզերքի բոլոր լրագիրները: Ի՞նչ ասել կ'ուզէ որ Գերմանիան այդ տեսակ յայտարարութիւններից յետոյ կամաց-կամաց դուրս կը մղէ այդ ճիւղից բոլոր իր մրցակիցներին, թէկուզ դրանցից մի մասը լինի և շատ արժանաւոր: Բայց ծագում է մի շատ լուրջ հարց. արդեօք ցուցահանդէսները հանդիսանում են մի ասպարէզ, ուր յաղթողը հանդիսանում է աւելի կատարելագործուածն ու յառաջագէտը:

Դժբախտաբար ոչ:

Ցուցահանդէսներում մասնակցել կարող են միմիայն նիւթապէս աւելի ուժեղները:

Հազար, տասը հազար ծախսելը ոչինչ է մի խոշոր կալուածատիրոջ, գործարանատիրոջ համար, թէկուզ դրանց կալուածքը կամ գործարանը տեխնիկական գիտական տեսակետից ոչ մի հետաքրքրութիւնը չը ներկայացնեն: Բայց ինչպէս մասնակցէ ցուցահանդէսին մի աղքատ, թէև շատ արժանաւոր ու առաջագէտ գիւղացի: Պարզ է որ բեկկամի բնաւորութիւն ունեցող ցուցահանդէսը հանդիսանում է այսպիսով մի նոր միջոց, որով աւելի ճարպիկն ու ունևորը ասպարէզից դուրս է նետում աւելի թոյլ, չունեւոր մրցակիցին: Ահա ինչու ուշադրութեան արժանի են այն ցուցահանդէսները, որոնք ունեն գիտական-կրթական նշանակութիւն, կամ որոնց մէջ մրցում են միատեսակ գոյն և բնաւորութիւն ունեցող ոյժերը (գիւղացին գիւղացու հետ, մեղուարոյժը մեղուաբուծի և այլն): Գալով ներկայումս բացուած կովկասեան ցուցահանդէսին, չի կարելի չը խոստովանուել որ գիտական-կրթական մասը նրա մէջ շատ թոյլ է ներկայացրած. բայց մի քանի արհեստաւորացի զբոսայիցիներէ և երկու կոնսակի ու երկու կաթնատնտեսական ֆիրմաներից, որոնք աշխատում են, միւս ճիւղերը և էքսպո-

նէնտները համարեա զուրկ են զիտական բնաւորութիւնից:

Յուցահանդէսում զետեղուած է զլիաւորապէս այն, ինչ որ բերել են էքսպօնէնտները: Բայց որովհետեւ էքսպօնէնտները մեծ մասամբ խոշոր կալուածատէրերը և մանաւանդ գործարանատէրերն են, ուստի ամբողջ յուցահանդէսի տպաւորութիւնը այնքան գիւղատնտեսական չէ, ինչքան արդիւնաբերական: Բացի զրանից և ներկայացրածի մէջ յաճախորդը տեսնում է ոչ թէ այն, ինչ որ կայ մեր գիւղացի միլիոնաւոր ազգաբնակչութեան իրական կեանքի մէջ, այլ միմիայն այն, և մեծ մասամբ լաւը, որ բերել է այս կամ այն անհատը:

Այս սխալը արժանի է ավստսանքի մանաւանդ այն պատճառով, որ իրականութիւն ներկայացնելը այնքան էլ դժուար չէր, եթէ յուցահանդէս կազմակերպողները օգտակար գտան հասարակութեան առաջ դնել մի քիւրդ ընտանիք իր նիստ ու կացով (թէև ոչ այնքան ընտրու ջրղերի համար), միթէ աւելի հետաքրքրական չէր լինի և աւելի գիտական նշանակութիւն չէր ունենալ ներկայացնել մի-մի տիպիկական ընտանիք հայերից, թուրքերից, վրացիներից, լեռնականներից: Իսկ հիմա յուցահանդէսով զաղափար կազմողները երկրի ներկայ վիճակի մասին կարող են ընկնել նոյն տեսակ սխալմունքի մէջ, որ բնական էր մեր բերած բարձրաստիճան օրիորդի համար խարկովի յուցահանդէսում: Բացի զրանից զետեղուած իրերի զասաւորութիւնը յուցահանդէսում չի համնում ոչ մի գիտական պահանջի: Գիւղատնտեսական բաժնում, օրինակ, բոլոր նահանգներից դրած են զատ-զատ սրտակերով բոլոր հացահատիկներից, առանց որ և է ձևով նշանակելու կամ ցոյց տալու, թէ որ հատիկը աւելի նշանակութիւն կամ արժէք ունի երկրի համար, որ բոյսը կենսական հացն է գիւղացու, և որն է խաղում միայն համեմի դեր, ինչով են տարբերում, բացի արտաքինից միենոյն բոյսի զանազան տեսակները կային:

Եգիպտացորենը (սիմինդր) մշակում է և՛ Թիֆլիսի, և՛ Քութայիսի, և՛ Երևանի, և՛ երկրի միւս նահանգներում: Այդ մասին խօսում են ամեն մի նահանգի բաժնում դրուած եգիպտացորենի պատկերը: Բայց յուցահանդէս կազմակերպողները լռում են թէ արդեօք ամբողջ հացի որ մասն է կազմում այդ հացահատիկը: Իսկ դա անհետաքրքիր չէ, որովհետեւ Քութայիսի նահանգում սիմինդրը կարող է կազմել հացահատիկների. 90%₀

Թիֆլիսի նահանգում 20 »

Երևանի նահանգում 1 »

Նոյն տեսակ թերութիւն մենք տեսնում ենք և՛ անտառա-

պահական, և՛ կաթնատնտեսական, և՛ այգեգործական, և՛ շերամապահական, և՛ համարեա միւս բոլոր բաժիններում...

Բացակայում է ներկայ ցուցահանդէսում և պատմական տեսակէտը: Ներկայ ցուցահանդէսը ունի յօրեկանական նշանակութիւն: Նա կազմակերպուած է Կովկասեան Գիւղատ. Ընկերութեան յիմնամեակի և Վրաստանի ու Կովկասի միացման հարիւրեամեակի առիթով: Ուստի կարելի էր սպասել որ ցուցահանդէսի գոնէ գլխաւոր բաժիններում ուշադրութիւն դարձրած կը լինէին պատմական կողմի վրայ, աշխատած կը լինէին յոյց տալ, թէ ինչ փոփոխութիւն է կրած մեր երկիրը վերջի 50, 100 տարուայ ընթացքում: Դժբախտաբար, համարեա ոչ մի բաժնում հարցի այդ կողմի վրայ ուշադրութիւն չի դարձրած և ներկայ ցուցահանդէսը ոչինչով չի տարբերուում 1889 թ. հասարակ ցուցահանդէսից: Հարկաւոր է առանձնապէս աշխատել, բրբրել այլեայլ նիւթեր, որպէս զի այս տեսակէտից կարելի լինի մի եզրակացութեան հանգել:

Մամուլի տակ են այժմ մի քանի գրքեր, որ հրատարակւում են ներկայ պատմական բոլէի առիթով:—Այդ գրքերում անշուշտ կը լինեն նիւթեր անցեալի մասին և մենք, հաւանական է, կարող կը լինենք վերադառնալ մեր շօշափած նիւթին, թէ ինչ տնտեսական փոփոխութիւն է կրած Կովկասը վերջին 100 կամ գոնէ 50 տարուայ ընթացքում:

Յամենայն դէպս, ցուցահանդէսը մի այնքան հետաքրքիր և ուշադրութեան արժանի ժողովածու է, որի տեսնելը անհրաժեշտ է ամեն մէկի համար: Այդ տեսակէտից չի կարելի չափստալ որ ցուցահանդէսի յաճախելը մեր հասարակութեան մեծամասնութեան համար սահմանափակուած է այլեայլ դժուարութիւններով: Նախ՝ անհամապատասխան չեն մեր հասարակութեան համար այն գները, որ նշանակուած են մուտքի համար: Կիրակի օրերը մուտքի արժէքն է 10 կոպ., հինգշաբթի օրերը 50 կ., մնացած օրերը—20 կ.: Բացի դրանից, երեկոյեան ժամը 6-ից սկսած կիրակի և լի (հասարակ) օրերը մուտքի գինը 20 և 30 կ. է: Ցուցահանդէսի սեղանատանը դժուար է գտնել բաժինը 60 կոպէկից աժան կերակուր. իսկ ներկայացումներն ու համերգները իրանց մուտքի թանգութեամբ մրցում են օպերային թատրոնների հետ:

Մեր բանուորներն ու գիւղացիները օրական ստանում են 40—60 կ. և շատ-շատ 1 ռուբլի: 30 կոպէկ մուտքի վճարը (հաշուելով և ձիաբարձի արժէքը մինչև ցուցահանդէս) կազմում է նրանց օրավարձի $\frac{1}{2}$ և $\frac{1}{3}$ -ը: Ճաշելը և ներկայացում յաճախելը կը նստի նրանց մէկ կամ երկու օրուայ աշխատանքի գինը,

որ համարելու է շատ զգալի: Յուդեանդէս-Վաղմակերպողները, հաւանական է, այս բանը ի նկատի չեն ունեցել և ժողովրդի այժմ չափել են իրանց կամ իրանց չըջանի մարդկանց արշինով: Նրանք պաշտօնեայ մարդիկ են, կամ ապահով դասակարգից: Իրանց օրակոսն ստացածը 5—10 ոտըլի է և աւելի, որի հետ համեմատած ցուցահանդէսի մուտքի արժէքը, ճաշելը կամ ներկայացում յաճախելը նրանց համար ոչինչ է: Այդ ծախսը հաւասար է նրանց ստացուածքի 1/2, 10/0, և շատ-շատ 50/0-ին: Եթէ այդ դասակարգի մարդիկն էլ բանուորի համեմատ վճարելու լինէին իրանց օրական ստացուածքի կէսը կամ երրորդ մասը (2—5, 10 ոտըլի), հաւատացած ենք որ զփուար թէ յաճախէին ցուցահանդէս մի-երկու անգամից աւելի: Այդ բարձր գներով բացատրուում է, կարծում ենք, ցուցահանդէսը յաճախողների թուի պակասութիւնը, ինչպէս և այն, որ զրանց թւում շատ չնչին են բանուորներն ու զիւղացիք, այսինքն այն դասակարգը, որ ամենից կարօտ է այդ տեսակ ձեռնարկութիւնների:

Որպէս զի ցուցահանդէսը քաղաքացի ապահով դասակարգի համար «թամաշայ» տեղ չը դառնայ, հարկաւոր է որ մուտքի, ճաշի և ներկայացումների գները իջեցուեն, կամ գոնէ աշակերտների, զինուորների և բանուորների ու զիւղացիների համար առանձնապէս նշանակուեն աւելի ցած գներ: Իսկ պահանջում է նոյնիսկ ցուցահանդէսի նիւթական շահը:

Ս. 2.